ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբեր 2018թ թիվ 24 գ.Լուսաձոր

ԼՈՒՍԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 7,8,9,10,11-րդ հոդվածներով ,ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18,19,20-րդ կետերով Լուսաձոր համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

2019թ ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1.Մինչև 300մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական տների ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության թույլտվության համար սահմանել 4000դրամ:

2.Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 100000 դրամ:

3.Համայնքի տարածքում

1)մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվությնա համար ,յուրաքանչյուր եռամյակի համար 2000դրամ:

2) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ծխախոտի սրտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 2000դրամ:

4. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցների վճար 2000 դրամ,ընդամենը 20000դրամ:

5.Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար 108000 դրամ:

ԼՈՒՍԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ	դեմ	ձեռնպահ
Մատինյան՝ Զոհրաբ			
Սարդարյան Համլետ			
Մատինյան Անդրանիկ			
Եզանյան Արսեն			
Նազարյան Միհեր			

Լուսաձոր համայնքի ղեկավար Վ. Սարդարյան